




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8771

ԿՈՒՍԱԿՏԻՎԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԴՆԹԱՑՆԵՐԻ
Ծ Ր Ա Ք Ի Ր



ԿՈՒՍԱԿՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ★ 1932

29.05.2013

24 SEP 2006

09 DEC 2009

3404

4-97

26

ԿՈՒՍԱԿՏԻՎԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ

1008
34518

Թարգմ. Հ. Լեվոնյան
Խմբ. Գ. Պ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԵՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ



1982

ԿՈՒՍԱԿՏԻՎԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ-
ՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Այս ծրագիրը տիպային ծրագիր է ստորին կուսակցական ակտիվի պատրաստման և վերապատրաստման դասընթացների համար: Նա հիմնականում կուսբջիջների քարտուղարների և բանվոր պրոպագանդիստների պատրաստման 3-ամսյա դասընթացների համար է: Ստորին կուսակտիվի պատրաստման և վերապատրաստման մյուս ձևերի համար ծրագրի նյութը, նայած դասընթացների տեղեկությանը և ունեկենդանիների կազմին ու պատրաստակամությանը, կարող է կրճատվել կամ ընդարձակվել:

Ծրագիրը կազմված է 75 ուսուրվա, կամ 600 ուսժամվա համար, ուսուրը հաշվելով 8 ժամ: Ծրագրի ստորին բերված նյութը նախատեսված է 470 ժամվա համար: Մնացած 130 ժամերը պետք է ոգտագործվեն մշակելու համար կուսաշխատանքի գործնական հարցերը ներկա ետապում, այն է՝ կուսբջիջի ներկուսակցական և մասսայական հարցերը ձեռնարկությունում և գյուղում—50 ժամ, մարքս-լենինյան ուսուցման կազմակերպման և մեթոդների հարցեր՝ 60 ժամ. մնացած 20 ժամը տրվում է ուղղմական հարցերին: Այդ հարցերի ծրագրերը կտրվեն լրացուցիչ կերպով:

Հանձնարարվող ծրագրի հիմքում դրված են յեղել XVII կուսկոնֆերենցիայի վորոշումները, և նույնպես զգալի տեղ է տրված բայլչևիզմի պատմության հարցերին: Ծրագրի թեորիական հարցերն ուսումնասիրությունը դասընթացներում պետք է սերտորեն շաղկապել յերկրի, չրջանի, ձեռնարկության սոցիալիստական շինարարության պրակտիկայի և ընթացիկ քաղաքականության հարցերի մշակման հետ:

Դրանից բացի անհրաժեշտ և հատուկ պարագամունքներում և ժողովներում ուսման ժամանակից դուրս կազմակերպել դասախոսություններ և զեկուցումներ մարքս-լենինյան թեորիայի հարցերի և տեղական կազմակերպությունների հերթական տնտեսական-քաղաքական խնդիրների շուրջը:

Դասընթացների տվյալ ծրագրով պարագամունքները պետք և ապահովեն Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի բնագիր յերկերի, կուսակցության ու կոմիտեների ծրագրերի և ՀամԿ(Բ)Կ համազումարների ու կոնֆերանսների վորոշումների ուսումնասիրությունն ունկնդիրների կողմից:

ԾՐԱԳՐԻ ՍԽԵՄԱՆ

1. Կապիտալիզմի հիմնական գծերը—20 ժամ:
2. Իմպերիալիզմը սոցիալիստական հեղափոխության նախորդակն և—30 ժամ:
3. Համաշխարհային տնտեսական ճգնաժամը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բաղադրի վրա—30 ժամ:
4. Պրոլետարիատի դեկտատուրան—30 ժամ:
5. Պրոլետարական պետության ազգային քաղաքականությունը—18 ժամ:
6. Յերկրի ինդուստրացումը սոցիալիստական շինարարության հիմնական լծակն և—24 ժամ:
7. Գյուղացիության հիմնական մասսաների շրջադարձը սոցիալիզմի կողմը և համատարած կոլեկտիվացման տվարտումը հիմնականում հնդամյակի վերջում—24 ժամ:
8. Ընկ. Ստալինի 6 պատմական պալմանները սոցիալիստական շինարարության խնդիրների հաղթական լուծման բանալին են—20 ժամ:
9. Կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացումը—18 ժամ:
10. Խորհրդային առևտուրը—20 ժամ:
11. Պրոֆիտությունները կոմունիզմի դպրոցն են—12 ժամ:

12. Յերկրորդ հնդամյակի քաղաքական խնդիրները և շատակարգային պայքարը ներկա ետապում—40 ժամ:

13. Յերկրորդ հնդամյակի տնտեսական խնդիրները—30 ժամ:

14. Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի ավանդադըն և—20 ժամ:

15. Բայլէկիզմի ծագումն ու զարգացումը և նրա միջադգային բնույթը—18 ժամ:

16. Բայլէկիզմը 1905 թ. հեղափոխության ժամանակ—18 ժամ:

17. Կուսակցությունը յերկու հեղափոխությունների միջև ընկած շրջանում—12 ժամ:

18. Կուսակցությունը 1917 թ. հեղափոխության ժամանակ—18 ժամ:

19. Կուսակցությունը քաղաքացիական պատերազմի տարիներին—12 ժամ:

20. Կուսակցությունը ռազմական կոմունիզմից նեպին անցնելու և վերականգնման շրջանում—18 ժամ:

21. Կուսակցությունը սոցիալիստական վերակառուցման շրջանում—18 ժամ:

22. III Կոմունիստական Ինտերնացիոնալը համաշխարհային սրոլետարական հեղափոխության կուսակցությունն և—15 ժամ:

23. Կուսաշխատանքը ներկա ետապում—50 ժամ:

24. Մարքս-լենինյան ուսուցման կազմակերպումն ու մեթոդիկան—60 ժամ:

25. Ռազմական հարցը—20 ժամ: Ընդամենը 600 ժամ:

1-ին ԹԵՄԱ. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ (20 ժԱՄ)

Արտադրության ապրանքային բնույթը: Կապիտալիստների և խոշոր հողատերերի մոնոպոլիան արտադրության կարևորագույն և վճռական միջոցների վրա: Ապրանքների արտադրությունը շահույթ ստանալու համար: Բանվոր դասակարգը զրկված և և արտադրության միջոցներից, առիդ-

ված և վաճառել իր բանվորական ուժը: Հայկելյալ արժեքի արտադրությունը արտադրության կապիտալիստական յեղանակի հիմքն և: Բանվոր դասակարգի շահագործումը:

Կապիտալիստական կուտակման ընդհանուր որենքը: Արտադրության համակենտրոնացումը և կենտրոնացումը: Բանվոր դասակարգի հարաբերական և բացարձակ աղքատացումը:

ձգնաժամերը, արտադրության անարխիան, մրցակցությունը, վորպես կապիտալիզմի հիմնական հակասության՝ արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր ձևի հակասության արտահայտություն:

Բուրժուազիայի տնտեսական տիրապետության քաղաքական արտահայտությունը կապիտալի պետական կազմակերպման մեջ՝ իբրև պրոլետարիատին ճնշելու ապարատի: Դասակարգային հակասությունների սրումը կապիտալիզմի զարգացման հետ միասին: Պրոլետարիատի պայքարն աղատագրության համար: Պրոլետարիատի դասակարգային կազմակերպությունները՝ կուսակցությունը և պրոֆմիությունները:

Գրականություն

Маркс, Капитал, т. I, гл. XXIV, разд. I, III, VII. Մարքս, Վարձու աշխատանք և կապիտալ:

Маркс, Заработная плата, цена и прибыль.

Մարքս յեվ Ենգելս, Կոմունիստական մանիֆեստ, բաժ.

1, էջ 30—31:

Энгельс, Анти-Дюринг, отд. III, разд. II, стр. 20. Լենին, «Մարքսի և մարքսիզմի մասին»—մարքսիզմի յերեք աղբյուրներն ու յերեք բաղկացուցիչ մասերը:

Լենին, «Մարքսի և մարքսիզմի մասին»—Մարքսի տնտեսական ուսմունքը:

Կոմիսսերնի ծրագիրը, գլ. I, § 1.

Համ 4 (բ) 4 ծրագիրը:

2-րդ ԹԵՄԱ. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈ-
ԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿՆ Ե (30 ԺԱՄ)

Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրագույն ստադիան: Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման վիթխարի աճումը: Ազատ մրցակցության կապիտալիզմի վերածումը մոնոպոլիստական կապիտալիզմի: Ուժեղ մոնոպոլիստական միավորումների կազմվելը: Ազատ մրցակցության և նրա կողքին առանձնապես սուր հակասությունների, տրենիանների և կոնֆլիկտների վրա գոյություն ունեցող մոնոպոլիաների ծնունդը:

Բանկային կապիտալի միացումը արդյունաբերական կապիտալի հետ: Կապիտալի արտահանումը: Պայքար կապիտալի կիրառման վայրի համար, վաճառահանման շուկաների և հումքի աղբյուրների համար:

Աշխարհի տնտեսական բաժանումը և պայքար աշխարհի նոր վերաբաժանման համար, իմպերիալիստական պատերազմների անխուսափելիությունը: Միլիտարիզմ: Բանվոր դասակարգի շահագործման և զաղուծների ու կիսազաղուծների ժողովրդական մասսաների ճնշման ուժեղացումը: Ֆինանսական-կապիտալիստական ոլիգարխիայի դեկատուումը և ներկայացնող պետական իշխանության տեսակարար կշռի ավելացումը: Կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի և զաղուծների ժողովրդական մասսաների պայքարը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Կապիտալիզմի բոլոր հակասությունների սրման իմպերիալիզմի որով: Ընդ. Ստալինը իմպերիալիզմի հինգ հակասությունների մասին կապիտալիստական սխառմի ընդհանուր ձգնաժամի շրջանում: Իմպերիալիզմը վորպես իմպերիալիստական պատերազմների և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջան: Իմպերիալիզմը վորպես փտող և մեռնող կապիտալիզմ: Իմպերիալիզմը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության նախորդակն և: Կապիտալիզմի անկանխելի կործանումը և պրոլետարիատի համաշխարհային հաղթանակը:

խարհային ղեկավարության պատմական անխուսափելիությունը:

Սոցիալ-Ֆաշիստական «Թեորիաների», այն է՝ կառուց-
կիական «ուշորախմբերի» ղեկավարի, հիլֆերդինգյան «կադ-
մալերսլաժ կապիտալիզմի» և լյուքսեմբուրգյան՝ կապի-
տալիզմի ավտոմատիկ կրակի «Թեորիայի» քննադատու-
թյունը:

«Կադմալերսլաժ կապիտալիզմի» բուխարինյան «Թեո-
րիան» իբրև սոցիալ-դեմոկրատական Թեորիայի ալյաձե-
վություն: «Ստազնացիայի» տրոցկիստական Թեորիայի
քննադատությունը:

Իմպերիալիզմի որոշ՝ կապիտալիզմի անհամաչափ զար-
գացման սրման լենինյան որենքը և մեկ յերկրում սոցիալիզ-
մի հաղթանակի հնարավորությունը: Լենինը և Ստալինը
մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի մասին: Կոմինտերնի
ծրագրերը սրբազանություն՝ իշխանության գլուխ անցնելու ու-
ղիների բազմադանություն և հեղափոխության հիմնական
տիպերի մասին:

Կապիտալիզմի զարգացման անհամաչափության որենքի
և մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության
տրոցկիստական ժխտման հակահեղափոխական ելույթները:
Այլ ուղորդունիստների՝ կապիտալիզմին վերադառնալու Թեո-
րիայի ռեստավրատորական ելույթները, վորպես մի Թեո-
րիայի, վոր իրականում ժխտում է սոցիալիզմի հաղթանակի
հնարավորությունը իՍՂՄ-ում:

Գրականություն

Լենին, Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորա-
գույն ետապ:

Ленин, Доклад на II конгрессе Коминтерна, т.
XXV, стр. 281—346, изд. 2-е и 3-е.

Ленин, Империализм и раскол социализма, т.
XIX, стр. 301—313, изд. 2-е и 3-е.

Ленин, О лозунге соединенных штатов Европы
т. XVIII, изд. 2-е и 3-е.

Կոմինտերնի ծրագիրը, բաժ. 1, § 2, 3 և 4, բաժ. IV,
§ 8, 9:

Ստալին, Լենինիզմի հիմունքների մասին, գլ. I—«Լե-
նինիզմի պատմական արմատները», գլ. III, § 3—«Պրոլե-
տարական հեղափոխության Թեորիան» (տես «Լենինիզմի
հարցերը»):

Ստալին, Լենինիզմի հարցերի շուրջը, գլ. VI—«Մի յերկ-
րում սոցիալիզմի հաղթանակի հարցը» (տես «Լենինիզմի
հարցերը»):

Ստալին, Սոցիալ-դեմոկրատական Թեքման մասին մեր
կուսակցության մեջ, «Կապիտալիստական յերկիրների զար-
գացման անհամաչափության մասին» բաժինը (առանձին
գրքով):

Сб. «Организованный капитализм» — дискуссия в
Комакадемии в 1930 г.

3-րդ ԹԵՄԱ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՆ-
ՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԲԱԶԱՅԻ
ՎՐԱ (30 ԺԱՄ)

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմը վոր-
պես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սկիզբ: Հոկտեմ-
բերյան հեղափոխությունը և աշխարհի բաժանումը յերկու
ախտամի, վորպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի
ամենից ավելի ցայտուն արտահայտություն: Կոմինտերնը
կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի յերեք շրջանների մա-
սին: իՍՂՄ-ի և կապիտալիստական աշխարհի հակասու-
թյունը վորպես ժամանակակից միջազգային դրության կենտ-
րոնական հակասություն: Ժամանակակից տնտեսական ճգ-
նաժամը և նրա առանձնահատկությունները: Ճգնաժամի
չեչտակի խորացումը ծայրագույն սահմաններին և հասցում
կապիտալիզմի բոլոր ներքին և արտաքին հակասություններին
սրումը:

Բուրժուազիայի ձգտումը՝ ապահովել ճգնաժամից դուրս
գալու կապիտալիստական յեկը բանվոր դասակարգի վրա

Հարձակվելու, գյուղացիութեանը և քաղաքային մասն բուրժուազիային քայքայելու, իմպերիալիստական պատերազմ և հատկապես հակախորհրդային ինտերվենցիա կազմակերպելու ճանապարհով:

Ֆաշիզմի աճումը և բուրժուական պետութեան ֆաշիզացիան: Ֆոն-Պապենի կառավարութեանը Գերմանիայում բացահայտ ֆաշիստական դիկտատուրա պատրաստելու կառավարութեան ե: Ֆաշիզմը և սոցիալ-ֆաշիզմը: Սոցիալ-ֆաշիզմը բուրժուազիայի գլխավոր սոցիալական հենարանն է: Տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի ավանգարդն է բանվոր դասակարգի դեմ պայքարելու և իՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա պատրաստելու գործում:

Խորհրդային-չինական կոնֆլիկտը 1929 թ. և չին-ճապոնական պատերազմը վերաբերում պատերազմի և հակախորհրդային ինտերվենցիայի միջոցով ճգնաժամից դուրս գալու ուղղությամբ բուրժուազիայի ձգտման դրսևորում: Սպառազինումների աճումը և նոր իմպերիալիստական պատերազմի պատրաստութեանը: Մասսաներին պացիֆիստական ստերոյի խաբելու պրակտիկան նոր պատերազմի պատրաստութեան գործում (Ժընևյի կոնֆերենցիան): Պետական կապիտալիզմի նոր դարաշրջանի մասին խոսող սոցիալ-ֆաշիստական թեորիայի քննադատութեանը:

Կապիտալիզմի պայմաններում կապիտալիզմի հակասութեաների վերացման անկարելիութեանը: Պրոլետարական հեղափոխութեանն այդ հակասութեաներից դուրս գալու միակ յեղնն է:

Բանվոր դասակարգի պայքարը ճգնաժամից հեղափոխական ճանապարհով դուրս գալու համար: Բանվորական և գյուղացիական հեղափոխական շարժման նոր վերելքը և պրոլետարիատի դասակարգային մարտերի պաշտպանողականից հարձակողականի վերածվելը: Հեղափոխական ժգնաժամի նախադրյալների հասունացումը Գերմանիայում և Լեհաստանում: Հեղափոխական պայքարի ծավալումն Իսպանիայում: Գործադուլային պայքարի արագ աճումը և գործա-

դուրհիներ շարժումը կապիտալիստական բոլոր յերկիրներում: Ջինական հեղափոխութեան խորհրդային ետապը և չինական կոմկուսակցութեան խնդիրները: Հեղափոխական շարժումը Հնդկաստանում և պայքարը պրոլետարիատի հեղեմոնիայի համար: Ալբանի-հեղափոխական շարժման ուժեղացումը զաղութային և կիսազաղութային յերկիրներում: Կոմկուսակցութեաների բայլելիկացումը և կոմկուսակցութեան հաջողութեանները բանվոր դասակարգի մեծամասնութեանը նվաճելու համար մղվող պայքարում:

Լենինը և Ստալինը հեղափոխական սխտուացիայի մասին՝ իբրև հեղափոխական ճգնաժամի բարձրագույն ձևի: Հեղափոխական սխտուացիան հեղափոխութեան վերածվելու հիմնական պայմանները: Հեղափոխական ճգնաժամի ուղրատունիստական հակադրումը քաղաքական ճգնաժամին: Պրոլետարական հեղափոխութեան որյեկալի նախադրյալները:

Կոմինտերնը ճգնաժամից հեղափոխական ճանապարհով դուրս գալու և պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարում: Յեղբայրական կոմկուսակցութեաների խնդիրները ճգնաժամից հեղափոխական ճանապարհով դուրս գալու համար մղվող պայքարում բանվորական մասսաներին կազմակերպելու գործում:

Գրականություն

Ստալին, Հալվետություն ՀամԿ (բ) Կ 16-րդ համագումարում, բաժ. I (տես «Լենինիզմի հարցերը»):

Ստալին, Լենինիզմի հարցերը, «Կոմինտերնի VI կոնգրեսի հիմնական պրոլիմները» գլ., Էջ՝ 474—480. «Աջ թեքման մասին ՀամԿ (բ) Կ —ում» § 2—«Տարածայնութեանները Կոմինտերնի գծով», Էջ՝ 555—562:

Сталин, О правом уклоне КП Германии. «Большевик» № 23—24 за 1928 г.

Կոմինտերնի ծրագիրը, Կոմինտերնի VI կոնգրեսի բանաձևերը, II բաժ.: Стенографический отчет, вып. VI, стр. 56—57.

XI пленум НККИ, Тезисы, резолюции и постановления.

ՄԱՐԽԱՆՈՎ, ԿԻԳԿ-ի պատգամավորության հաշվետվությունը 16-րդ կուսհամագումարում:

ՄԱՐԽԱՆՈՎ, ղեկուցում 17-րդ կուսկոնֆերենցիայում (միջադեպի դրության վերաբերող մասը):

Мануилский, Доклад на XI пленуме ИККИ.

«Коммунистический интернационал» ժուրնալը № 9 և 10 (ԿԻԳԿ-ի XI պլենումին նվիրված հոդվածները) և 1931 թ. № 1—2:

Фогараши, К вопросу о госкапитализме, «Коммунистический интернационал» № 8—9 за 1932 г.

ԳՐԴԻԹԵՄԱ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

(30 ժԱՄ)

Մարքսի, Ենգելսի, Լենինի ուսմունքը պետության մասին վորպես դասակարգային տիրապետության կազմակերպություն: Բուրժուազիայի տիրապետության բռնի տապալումը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը:

Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխության հիմնական լուսնորակությունն է: Պրոլետարիատի դիկտատուրան պետության հատուկ տիպ է և պրոլետարիատի դասակարգային պայքարի բարձրագույն ձևը: Դասակարգային պայքարի շարունակումը նոր ձևերով պրոլետարիատի դիկտատուրայի որով:

Պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերը: Լենինը և Ստալինը պրոլետարիատի դիկտատուրայի սխեմայի մասին: Պրոլետարական ղեմնկրատիայի արմատական սարքերությունը բուրժուական ղեմնկրատիայից:

Սոցիալ-Ֆալստական թեորիան պետության վերդասակարգային բնույթի, դասակարգային հակասությունների բխցման և կապիտալիզմի սոցիալիզմի մեջ ներառելու մասին: ՆՍՀՄ-ում պրոլետարիատի դիկտատուրայի ժխտումը

II Խնտերնացիոնալի և հակահեղափոխական տրոցկիզմի կողմից:

Պրոլետարիատի դիկտատուրան գլխավոր հարցն է լենինիզմի մեջ, նրա մեկնակետը, նրա ֆունդամենտը: Գյուղացիական հարցը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի մաս: «Դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի պահպանումն է, վորպեսզի պրոլետարիատը կարողանա պահել ղեկավար դերը և պետական իշխանությունը» (Լենին): Պրոլետարիատի վերաբերմունքը գյուղացիության հանդեպ հեղափոխության տարբեր եռապններում:

XVII կուսկոնֆերանսը պրոլետարական պետության հետագա ամրացման խնդիրներին մասին յերկրորդ հնգամյակում: Դասակարգային պայքարը ներկա եռապնում: Պետության մահացման համար պայմաններ նախապատրաստելու նպատակով պրոլետարիատի դիկտատուրան ամրացնելու խնդիրը:

Այլ ոպորտունիզմը պրոլետարիատի դիկտատուրայի մասին: Բուխարինը պետության մասին իրեն «Թաղանթի» «դասակարգերի համագործակցության» համար: «Ձախ» ոպորտունիզմը պրոլետարական պետության դերին մասին ներկա եռապնում (համատարած կոլեկտիվացման շրջաններում խորհուրդները լիկվիդացիայի յենթարկելու առաջարկը):

Դասակարգային պայքարի մարման և կուլյակի սոցիալիզմի մեջ ներառելու բուխարինյան թեորիայի կապը կապիտալիզմի իադաղ ճանապարհով սոցիալիզմի մեջ ներառելու վերաբերյալ II Խնտերնացիոնալի ռեվոլյուցիոնատական թեորիայի հետ: Հակահեղափոխական տրոցկիզմը աշխատավոր գյուղացիության սոցիալիստական վերափոխման անկարելիության մասին: Տրոցկիզմի բուրժուական թեորիան մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու անկարելիության մասին:

Պայքարը յերկու ֆրոնտի վրա՝ ընդդեմ աջ ու «ձախ» ոպորտունիզմի և նրանց նկատմամբ հաշտվողականության:

վորդն պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման հիմնական պայման:

Սորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև: Փարիզյան կոմունան վորպես պրոլետարական դիկտատուրայի առաջին պատմական ձևը: Սորհրդային պետությունը վորպես Փարիզյան կոմունայի փորձի հետագա զարգացումն ու ամրապնդումը:

Սորհրդային պետությունը վորպես ամենից ավելի մասնաշաղկապ և ամենից ավելի դեմոկրատական պետական կազմակերպություն, վորը պրոլետարիատի և աշխատավոր դյուղացիության ղոգման ասպարեզ է հանդիսանում չահադործողների դեմ մղվող պայքարում: Բանվոր դասակարգի դեկավար դերը: Բանվորական և աշխատավորական լայն մասնակցություն պետության կառավարմանը մասնակից դարձնելու խնդիրը: Բյուրոկրատական խեղաթյուրումները պետական ասպարատում և պայքարը նրանց դեմ:

Սորհուրդների խնդիրները ժամանակակից ետապում:

ԽՍՀՄ ընտրողական իրավունքը: Սորհրդային իշխանության օրգանները:

ԽՍՀՄ մեջազգային նշանակությունը: ԽՍՀՄ-ն խորհուրդների համաշխարհային հանրապետության նախա-տիպարն է:

Գրականություն

Լենին, Պետություն և հեղափոխություն, գլ. I, § 1—3, գլ. II, III, V և VI:

Ленин, Пролетарская революция и ренегат Каутский, т. XV, изд. I-е, стр. 447—470.

Ленин, Задачи пролетариата в нашей революции, т. XIV изд. 1-е, стр. 37—38.

Ленин, Детская болезнь „левизны“ в коммунизме, т. XVII, изд. 1-е, стр. 117—118, 135—136.

Ленин, Тезисы и доклады о буржуазной демократии и диктатуре пролетариата, т. XVI.

Ленин, Рабочая партия и крестьянство, Собр. соч., изд. 1-е, т. IX, стр. 263—269.

Ленин, Тезисы об очередных задачах II конгресса Коминтерна, т. XVII. Тезисы по крестьянскому вопросу (сборник Коминтерна в резолюциях).

Կոմիստերնի ծրագիրը, գլ. IV, § 1, 2, 3, 5, 6.

Ստալին, «Լենինի ղմի հարցերը»—Լենինի ղմի հիմունքների մասին, գլ. IV և V:

Ստալին, «Լենինի ղմի հարցերը»—Լենինի ղմի հարցերի շուրջը, գլ. IV: Պրոլետարական հեղափոխությունը և պրոլետարիատի դիկտատուրան, գլ. V: Կուսակցությունը և բանվոր դասակարգը պրոլետարիատի դիկտատուրայի սխառեմում, գլ. VII: Պայքար սոցիալիստական շինարարության հաղթանակի համար:

Ստալին, «Լենինի ղմի հարցերը»—Բանվորա-դյուղացիական կառավարության հարցի շուրջը: Հարցեր և պատասխաններ, գլ. I և V: Գյուղացիական հարցի վերաբերյալ կուսակցության յերեք հիմնական լոզունգների մասին, կուլակության յերեք դասակարգ վերացնելու քաղաքականության հարցի առթիվ:

Ստալին, Սոցիալ-դեմոկրատական թեքումը մեր կուսակցության մեջ: Յեղրափակման խոսքը Համկ (Բ) Կ XV կոնֆերանսում. 1. «Միքանի ընդհանուր հարցերի մասին: Մարքսիզմը ղոգմա չէ, այլ ղործողության դեկավարություն»:

Ստալին, «Լենինի ղմի հարցերը»—Աջ թեքման մասին Համկ (Բ) Կ մեջ, գլ. III, § ա) և բ), «Դասակարգային պայքարի մասին» և «Դասակարգային պայքարի սրման մասին» և դ) «Գյուղացիության մասին»:

Ստալին, «Լենինի ղմի հարցերը»—Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան, գլ. IV:

Սորհուրդների համամիութենական Յ-րդ համադումարի բանաձևն ընկ. Յակովլևիի ղեկուցման առթիվ:

Стецкий, Речь на XVII партконференции.

ԵՐԿ ԹԵՄԱ. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶ-
ԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (18 ԺԱՄ)

Մարքս—Ենդելս—Լենինը և Ստալինը պրոլետարիատի դասակարգային պայքարի ինտերնացիոնալ բնույթի մասին:

Աղգային հարցի պատմական-դասակարգային դրուժը: Աղգային հարցը կապիտալիզմի որով: Այդպիսի ինքնորոշման իրավունքը և ճնշված ու ճնշող ազգերի պրոլետարիատի խնդիրները:

Աղգային-գաղութային հարցը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում: Աղգային հակառակությունների և աղգային — գաղութային ճնշման հրահայտական սրումն իմպերիալիզմի որով: Աղգային հակառակությունների լուծման անկարելիությունը կապիտալիստական կարգերի շրջանակներում: Առաջավոր յերկիրների պրոլետարական հեղափոխության և գաղութների ժողովուրդների հեղափոխական — ազատադրական շարժման միասնական Փրոնտն իմպերիալիզմի դեմ և պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար: Կոմինտերնի ծրագրերը հեղափոխության հիմնական տիպերի մասին: Լենինը և Ստալինը այն մասին, վոր հնարավոր է հետամնաց յերկիրների դարգացման վոչ-կապիտալիստական ուղին առաջավոր յերկիրների հաղթանակած պրոլետարիատի աջակցությամբ:

Սոցիալ-Փաշիզմի՝ իրեն իմպերիալիզմի գլխավոր հենարանի՝ դերը աղգային ստրկացման և ճնշման գործում: Ռե-Լյուքսեմբուրգի, Ռադեկի կիսամենչեկյան սխալները աղգային հարցում և «ձախերի» հակալենինյան սխալները բայլչեկիների շարքերում (Պյատակով, Բուխարին):

Կոմինտերնի պայքարը հակահեղափոխական տրոցկիզմի և աջերի դեմ աղգային-գաղութային հարցում (Ռոյ, Եմբեր Գրո և մյուսները):

ԽՍՀՄ-ն սոցիալիզմ կառուցող ժողովուրդների միություն է: Աղգային հարցի լուծումը Հոկտեմբերյան հեղափոխությամբ: ԽՍՀՄ-ն ազատագրված ժողովուրդների

կամավոր միավորումն է: Դաշնակից հանրապետությունները, ինքնավար հանրապետությունները և ինքնավար մարզերը, աղգային շրջանները:

Պրոլետարիատի սղնությունը Միության հետամնաց ժողովուրդներին նրանց տնտեսական և կուլտուրական աճման գործում: Աղգային հանրապետությունների և մարզերի սոցիալիստական ինդուստրացումը:

Պայքար շահագործման կապիտալիստական ու նախակապիտալիստական ձեերի դեմ և նրանց վոչնչացումը: Դասակարգային պայքարն աղգային հանրապետություններում և մարզերում, դասակարգային և աղգային հակառակությունների ներհյուսումը: Համատարած կոլեկտիվացման և կուլաիւթյան՝ իբրև դասակարգի՝ վերացման ուղիներն աղգային ռայոններում:

Աղգային կուլտուրայի հարցերը: Աղգային կուլտուրայի պրոբլեմը կապիտալիզմի որով: Աղգային կուլտուրայի դարգացման պայմանները պրոլետարիատի դեկտատուրայի որով: Զեով աղգային և բովանդակությամբ սոցիալիստական աղգային կուլտուրաների ստեղծումը:

Յերկրորդ հեղամյակը աղգությունների տնտեսական և կուլտուրական հետամնացության վերացման հեղամյակն է: Աղգային հարցի լուծումը միջաղգային մասշտաբով սոցիալիզմի հաղթանակի ժամանակ:

Մեծապետական շովինիզմը և տեղական նացիոնալիզմը վորպես վերացվող դասակարգերի կողմից մղվող դասակարգային պայքարի հատուկ ձեեր: Մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի թեքումները: Յերկու Փրոնտով վճռական պայքարի խնդիրը աղգային հարցում—պայքարը նդդեմ մեծապետական թեքման՝ իբրև դլխավոր վտանդի, և ընդդեմ տեղական նացիոնալիզմի:

Գրականություն

Ленин, Национальный вопрос в нашей программе, Собр. соч., т. IV, изд. 1-е.
Ленин, Резолюция по национальному вопросу.

принятая на совещании ЦК с партийными работниками в 1913 г. Резолюция по национальному вопросу, принятая Всероссийской партконференцией 1917 г., т. XIX.

Ленин, О национальной программе РСДРП. Из речи и заключительного слова по программе партии на VIII с'езде партии, т. XIX, стр. 228—235. Критические заметки по национальному вопросу.

О праве наций на самоопределение, особенно гл. 1, 2, 3, 7, 8, 9 и 10.

О национальной гордости великороссов.

О программе мира.

Социалистическая революция и право наций на самоопределение.

Тезисы и речь Ленина по национальному и колониальному вопросам на II конгрессе Коминтерна, стр. 235, 251 и 266—275.

Ստալին, «Լենինի գծի հարցերը»:

Լենինի գծի հիմունքների մասին, գլ. VI—«Ազգային հարցը»:

Արևելյան ժողովուրդների կոմհամալսարանի քաղաքական խնդիրների մասին:

Դարձյալ ազգային հարցի շուրջը (ընկ. Սեմիչի հոդվածի առթիվ):

Կուսակցության 16-րդ համագումարում արած գեկուցումից և յեղրափակման խոսքից, հղ. 804—813, 816—819:

Կոմիստերնի ծրագիրը, գլ. IV, § 8 և 9:

Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան (1917 թ. նոյեմբերի 2-ին) ՌՍՖՍՀ և ԽՍՀՄ Սահմանադրության մեջ:

Резолюции X и XII с'ездов партии по нацвопросу.

Декларация об образовании СССР (см. Конституции СССР).

6-րդ ԹԵՄԱ. ՅԵՐԿԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԼԾԱԿՆ
Ե (24 ԺԱՄ)

Լենինը և Ստալինը սոցիալիստական ինդուստրացման մասին: Խոշոր մեքենայական ինդուստրիան սոցիալիզմի նյութական հիմքն է: Սոցիալիստական ինդուստրացման ամենաարագ տեմպերի անհրաժեշտությունն ու հնարավորությունը:

Լենինի առաջադրած՝ տեխնիկական-տնտեսական տեսակետից «առաջավոր կապիտալիստական յերկիրներին հասնելու և անցնելու» խնդիրը: «Մենք առաջավոր յերկիրներից հետ ենք մնացել 50—100 տարով: Մենք պետք է այդ տարածությունը կտրենք անցնենք տասը տարում» (Ստալին):

Կուսակցության 16-րդ համագումարը ԽՍՀՄ ինդուստրացման մասին: Ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանի հաստատումը 16-րդ Կուսկոնֆերանսի կողմից: Հնգամյակը ինդուստրացման կոնկրետ պլանն է: Կապիտալիստական և սոցիալիստական ինդուստրացումը: Սոցիալիստական ինդուստրացման աղբյուրները:

Ժողովրդական տնտեսության ընդհանուր դերերը սոցիալիստական ինդուստրացման նշանաբանով: Սոցիալիստական արդյունաբերության, հատկապես ծանր ինդուստրիայի զարգացման անհախընթաց տեմպերը: Վոլջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման սեփական բազայի ստեղծումը սոցիալիստական խոշոր մեքենայական ինդուստրիայի միջոցով:

Սոցիալիստական ինդուստրիայի նոր ղեկանտների շինարարությունը:

Մետալուրգիական նոր քաղայի—Ուրալ—Կուլնեցկի կոմբինատի ստեղծումն Արևելքում: Նոր արտադրությունների յուրացումը և տեխնիկայի բայլենիկյան տիրապետումը:

Հնգամյակի կատարումը չորս տարում, իսկ արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերում՝ յերեք և անգամ յերկու ու կես տարում:

ԽՍՀՄ-ի սոցիալիզմի շրջանը թեև կոխել է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը: «Այնուամենայնիվ հարցի լիակատար ու անվերադարձ լուծումը սոցիալիզմի ոգտին թե՛ քաղաքում և թե՛ գյուղում:

Ծանր ինդուստրիայի աճումը մեր տնտեսական անկախության հիմքն է: Ինդուստրացումը և ԽՍՀՄ պաշտպանունակության ամրացումը:

Սոցիալիստական ինդուստրիայի դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Սոցիալիստական ինդուստրացումը և ԽՍՀՄ աղբյուրների տնտեսական և կուլտուրական հետամնացության վերացման հիմքն է:

XVII կուսակոնֆերանսը առաջին հնգամյակի արդյունքների մասին:

Կուսակցությունն այս հաջողությունները ձեռք բերեց՝ պայքարելով տրոցկիզմի այն բուրժուական թեորիայի դեմ, թե անհնարին է սոցիալիզմի կառուցումը մեկ յերկրում և անխուսափելի յե կապիտալիզմի ուստավրացիան, այն տրոցկիզմը, վորը ներկայումս դարձել է բուրժուական հակահեղափոխության առաջավոր ջոկատը:

Կուսակցությունն այս հաջողությունները ձեռք բերեց՝ պայքարելով ալ ոպորտունիզմի դեմ, վորի դիժը կայանում էր վոչ միայն սոցիալիստական հարձակման քաղաքականությունը վիժեցնելու, այլև կուլակության և բուրժուական ելեմենտների առաջ ուղղակի նահանջելու մեջ» (17-րդ կուսակոնֆերանսի բանաձևից):

Հնգամյակի չորրորդ, ավարտական տարվա պլանի կատարումը յերկրորդ հնգամյակի հաղթանակների անհրաժեշտ նախադրյալն է: Հնգամյակի չորրորդ տարվա հիմնական դիրքավորումները: Պայքարը ֆաշիզմի, աժուխի և մեքենաշինության համար—1932 թ. արդյունաբերական պլանի արժատական խնդիրն է:

Տրանսպորտի սոցիալիստական վերակառուցումը և պայքար աշխատ—ձմեռային փոխադրումների պլանի կատարման համար:

Ծանր արդյունաբերության զարգացման ներկա տեմպերի ու մակարդակի և վողջ ժողովրդական տնտեսության աճման հիման վրա թեև ու սննդի արդյունաբերության ավելի արագ զարգացման հնարավորությունը:

Համառ և լարված պայքարը տնտեսական ոլանների կատարման համար, վորպես աճման դժվարությունների հաղթանակում, ինդուստրացման արագ տեմպերի իրադրոժման և աշխատավորության նյութական մակարդակի բարձրացման անհրաժեշտ պայման:

Ընկ. Ստալինի վեց պայմանները՝ սոցիալիստական շինարարության խնդիրները հաղթական լուծման բանալին են: Պայքար տեխնիկայի տիրապետման համար:

«Տեխնիկական վերակառուցման շրջանում վճռում է ամեն ինչ» (Ստալին):

Աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, արտադրանքի վորակի բարձրացման առաջադրությունների լրիվ կատարման անհրաժեշտությունը: Տնտեսաշխարհի և ֆինանսական դիսցիպլինայի ամրացումը, խնայողության ուժեղացումը հաստատուն կիրառումը, ներքին ուսուրանքի մորիլիզացիան տնտեսական աշխատանքի կարևորագույն խնդիրներն են:

Կուսակցության ու բանվոր դասակարգի բոլոր ուժերի մորիլիզացիան և սոցիալիստական մրցության ու հարվածականության հետագա ծավալումը պլանի համար պայքարելու ամենաազդեակ լծակներն են:

Գրականություն

Ленин, Речь на VIII съезде советов, Собр. соч., т. XVII, изд. 1-е.

Ленин, Тактика Российской коммунистической партии, Собр. соч., т. XVII, ч. 1, стр. 303—311, изд. 1-е.

Լեճին, Գաղութավորների համառուսաստանյան II համագումարը:

Ленин, Об едином хозяйственном плане, Собр. соч., т. XVI, изд. 1-е.

Ленин, О нашей революции, Собр. соч., т. XVIII, ч. 2, изд. 1-е или т. XVIII, ч. 1-е, изд. 1-е.

Լենին, Ռուսական հեղափոխության 5 տարին, Собр. соч., т. XVIII, ч. 2-я, изд. 1-е կամ XXVII հ.:

Լենին, Յերկ. ժող. XXVII հ., էջ 47—70:

Ստալին, Ճառ տնտեսավարների կոնֆերենցիայում:

Ստալին, ԿԿ-ի քաղաքական հաշվետվությունը և բանաձևերը ՀամԿ (բ) Կ XIV, XV, և XVI համագումարներում:

Ստալին, «Լենինի գծի հարցերը», էջ՝ 507—547, 581—582:

Կուլբիշևի, Ձեկուցումը ՀամԿ (բ) Կ 16-րդ համագումարում:

Մուլոտով, Առաջին հնդամյակի կատարման մասին (գեկուցում ԽՍՀՄ Կենտգործկոմի II սեսիայում):

Մուլոտով, Ձեկուցում XVII կուսկոնֆերանսում, «Առաջին հնդամյակի արդյունքները» բաժինը:

Որջոնիկին, Ձեկուցում XVII կուսկոնֆերանսում:

ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի գեկտեմբերյան (1931 թ.) պլենումի բանաձևերը:

7-րդ ԹԵՄԱ. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ-
ՍԱՆՆԵՐԻ ՇՐՋԱԴԱՐՁԸ ՍՈՑԻԱԼԻՋՄԻ ԿՈՂՄԸ ՅԵՎ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՅՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՀԻՄՆԱ-
ԿԱՆՈՒՄ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՎԵՐՋԻՆ (24 ԺԱՄ)

Մարքսը, Ենգելսը, Լենինը և Ստալինը գյուղատնտեսության զարգացման ուղիների մասին կապիտալիզմի պայմաններում, մանր-ասլրանքային գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հնարավորության մասին պրոլետարիատի ղեկավարության ռոլը: Մանր-գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման պայմանները ԽՍՀՄ-ում—պրոլետարիատի ղեկավարման, հողի ազգայնացումը, սոցիալիստական ինդուստրիայի հզոր զարգացումը, պրոլետարական պետության գեկավարությունն ու ոգնությունը, հենվելով չքավորության վրա և

միջակի հետ դաշինք կապելով կուլակի դեմ պայքարելու Լենինյան լոզունգի իրագործումը: Լենինյան կոոպերատիվ պլանը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհն է:

Յերկրի ինդուստրացումը վորպես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմունք: Խորհանոտսության շրջանները գյուղատնտեսության վերակառուցման վողնաչարն են և առաջատար ուժը: Խորհանոտսության շրջանները խոշոր գյուղատնտեսության վարման շկոլա յեն կոլտնտեսություններին համար: ՄՏԿ-ները կոլտնտեսային չարժման պրոլետարական դեկավարման լծակն են:

Գյուղացիության հիմնական մասսաների շրջադարձը սոցիալիզմի կողմը: Այդ շրջադարձի նախապատրաստումը կուսակցության ամբողջ նախորդ քաղաքականությունը:

Կուսակցության անցումը՝ կուլակային ելեմենտներին սահմանափակելու և դուրս մղելու քաղաքականությունը, դեպի համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը՝ վորպես դասակարգի վերացնելու քաղաքականությունը:

1931 թվին համատարած կոլեկտիվացման ավարտումը հիմնական հացահատիկային շրջաններում:

Կուսակցության գերեկտիվը 1932—33 թ. համատարած կոլեկտիվացումը ԽՍՀՄ-ի բոլոր մնացած շրջաններում հիմնականում ավարտելու մասին:

Կոլտնտեսական գյուղացիությունը հողագործության կենտրոնական դեմքն է: Կոլտնտեսային-խորհանոտսային շինարարության հիման վրա ԽՍՀՄ-ն դառնում է աշխարհի ամենախոշոր հողագործության յերկիրը: Հացահատիկային պրոդլեմի լուծումը: Հումքային և անասնապահական պրոդլեմի լուծման խնդիրները:

Յերկրի դասակարգային ուժերի փոխհարաբերության արմատական փոփոխումը կոլեկտիվացման հաջող ծավալման և կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման պրոցեսում:

Կոլտնտեսական դյուղացիությունը խորհրդային իշխանության հենարանն է դյուղում :

Կոլտնտեսային շարժման մեծագույն հաղթանակները վորպես արդյունք դասակարգային թշնամիների և նրանց՝ մեր կուսակցություն մեջ յեզած դործկալների դեմ մղվող անխնա պայքարի : Դասակարգային պայքարի նոր ձևերը կոլտնտեսությունների ներսում : Դասակարգային պայքարի տարրերի զրահորումը կոլտնտեսությունների ներսում : 1931 թ. հացամթերումների դասերը : Պոկոդական տնտեսներն առանձին խորհանտեսություններում : «Սոյուզախար»-ի և «Ջերնոտբետի» խորհանտեսությունների դասերը :

Կուսակցության անհաշտ պայքարը յերկու Ֆրոնտի վրա : Այլ ոպորտունիզմը կուլակություն ագենտուրան և կուսակցության ներսում : Այլերի հայացքների աղակցությունը Կոնդրատյովի վնասարարական թեորիայի հետ : Կուլակի՝ սոցիալիզմի մեջ ներաճելու, դասակարգային պայքարի մարման և ինքահոսի ալ ոպորտունիստական «թեորիաները» : Այլերի պայքարը կոլեկտիվացման դեմ, անհատական տնտեսության ամրացման և զարգացման համար, կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրացման դեմ : Այլ ոպորտունիզմը զլխավոր վտանգն է տվյալ ետապում : «Չախ» սխալները կոլտնտեսային շարժման մեջ իրրև հակահեղափոխական տրոցկիզմի ղեցիղիվներ, վորոնք տանում են դեպի բանվոր դասակարգի և դյուղացիության դաշինքի վլմեցումը : «Չախ» խոտորոգներն ոգնում են ալ ոպորտունիստներին : Համատարած կոլեկտիվացման արագ ավարտման պատրվակով կոլեկտիվացման ուղղած թվերի յետևից ընկնելու, դյուղատնտեսական արտելի ձևի վրայով թոխիջի վործներ անելու, «կամավորության» սկզբունքը խախտելու դեմ պայքարի անհրաժեշտությունը : «Չախ» խոտորումները անասունների հանրայնացման բնագավառում : Հետագա անհաշտ պայքարը յերկու Ֆրոնտի վրա, վորպես կոլեկտիվացման հաջողությունների անհրաժեշտ պայքար :

Գրականություն

Энгельс, Крестьянский вопрос.

Энгельс, Политическое завещание.

Լենին, Կոսպիացիայի մասին, հատ. XXVII:

Ленин, Резолюция VIII с'езда партии об отношении к среднему крестьянству, т. XVI, стр. 158—161, изд. 1-е; речи на II Всесоюзном с'езде коммунистической организации Востока и на I с'езде земельных коммун и сельскохозяйственных артелей, стр. 381, 400.

Ленин, Доклад о продналоге на Всероссийской конференции В.П. (6), т. XVIII, стр. 236—248, изд. 1-е, Заключительное слово на X с'езде РКП (6), стр. 135—139.

Ленин, Заключительное слово по докладу на XI с'езде партии, т. XVIII, ч. 2, стр. 26—34, изд. 1-е.

Ստալին, «Լենինիզմի հարցերը» :

Ստալին, Հացի Ֆրոնտում :

Ստալին, Մեծ բեկման ցարին, III բաժին :

Ստալին, Ճառ մարքսիստ-աղբարագետների համադումարում :

Ստալին, Կուլակություն իրրև դասակարգ՝ վերացնելու քաղաքականության հարցի լուծիվ :

Ստալին, Պատասխան ընկեր կոլտնտեսականներին :

Ստալին, Հաշվետվություն 16-րդ կուսամագումարին, ԳԼ. II, բաժ. IV և V :

Յակովլևիվ, Ջեկուցումներ 16-րդ կուսամագումարին և ԽՍՀՄ Նորհուրդների VI համագումարին :

ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի 1931 թ. հունիսյան սլենումի բանաձևը «Գարնանացանի կամպանիայի և բերքահավաքի կամպանիայի մասին» : ԿԿ-ի վերջումները կոլտնտեսային շինարարության մասին :

Ց-ԴԴ ԹԵՄԱ. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՎԵՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅ-
ՄԱՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ ԵՆ
(20 ժԱՄ)

Մարքսը, Ենդելը, Լենինը և Ստալինը աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի մասին :

Աշխատանքի արտադրողականության անընդհատ աճումը սոցիալիստական շինարարության հետագա ծավալման համար մեր կողմից մղվող պայքարի կենտրոնական ողակն է :

Պայքարը աշխատանքի արտադրողականության բարձրացման և սոցիալիստական կարգապահության դաստիարակման համար դասակարգային պայքարի ֆրոնտն է : Կապիտալիզմի մնացորդների դեմ պայքարելու խնդիրը, նրանց դեմ, ովքեր սոցիալիստական ձեռնարկությունն են դալիս «ավելի մեծ պատառ պոկելու և ծլկելու» համար (Ստալին) :

Ընկ. Ստալինի վեց պատմական պայմանները վորպես աշխատանքի արտադրողականության բարձրացման և այդ հիման վրա սոցիալիստական կուտակման աղբյուրներն ընդարձակման համար բալլչելիկորեն պայքարելու ծավալուն ծրագիր, վորպես մեր աշխատանքի վորակական և քանակական ցույցանիշների հետագա բարելավումն ու սոցիալիստական շինարարության տեմպերի հետագա արագացումը հետապնդող միջոցառումների ամբողջական, միասնական պիտոն :

Ընկ. Ստալինի առաջին պայմանը. «կազմակերպված ձևով հավաքագրել բանվորական ուժը կոլտնտեսությունների հետ պայմանագրեր կնքելու կարգով, մեքենայացնել աշխատանքը» : Կուսակցության ծրագիրը բանվորական ուժի ճիշտ բաշխման և վերաբաշխման մասին, վորպես ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսությունից դարգացման պայման :

Նոր պայմանները մեր ձեռնարկությունները բանվորական ուժով ապահովելու գործում : Արդյունաբերությունից համար բանվորների կազմակերպված հավաքագրում կատարելու պրակտիկան տնտեսական կազմակերպությունների կողմից կոլտնտեսությունների և կոլտնտեսականների հետ պայմանագրեր կնքելու միջոցով : Աշխատանքի ամենից ավելի ծանր պրոցեսներն մեքենայացմանն անցնելը : Ընկ. Ստալինի այս ցուցումի իրացման պրակտիկան : Խնդաթյունները բանվորական ուժի հավաքագրման բնագավառում : Բանվորական ուժի կազմակերպված հավաքագրման համար հետագայում պայքարելու խնդիրները :

Ընկ. Ստալինի յերկրորդ պայմանը. «վերացնել բանվորական ուժի հոսունությունը, վոչնչացնել հավասարեցումը, ճիշտ կազմակերպել աշխատավարձը, բարելավել բանվորների կենցաղային պայմանները» :

Բանվորական ուժի հոսունությունը վորպես արդյունաշխատավարձի վոչ-ճիշտ կազմակերպման, վոչ-ճիշտ տարիֆային սխտեմի, «ձախ» հավասարեցման : Մարքսը և Լենինը աշխատանքի վարձատրման մասին սոցիալիզմի որով : Հավասարեցման մանր-րորժուական ելությունը : Բանվորների առաջատար խմբերին՝ առաջնացման, աշխատավարձի բարձրացման միջոցով ձեռնարկությունն ու ցեխին ամրացնելու խնդիրը : Հավասարեցման վերացումը վորպես ստիմուլ՝ անվորակ բանվորներին վորակյալների շարքը փոխադրելու համար :

Արդյունաբերությունից առաջատար ճյուղերում աշխատանքի բարձրագույն վարձատրման ապահովումը : Պայքար կուսակցության քաղաքականությունից խեղաթյուրումների դեմ աշխատավարձի բնագավառում, խեղաթյուրումներ, վորոնք խզում են առաջացնում աշխատավարձի աճման և աշխատանքի արտադրողականության բարձրացման միջև : Նոր տարիֆային ռեֆորմի համար մղվող պայքարի արդյունքները :

ՀԱՄԿԻՍ-ի նախագահություն և Ծանր արդյունաբերությունից Ժողկոմատի վորոշումը խոտանի և պարապուրդների վարձատրման պրակտիկան փոխելու մասին :

Ընկ. Ստալինի յերրորդ պայմանը. «վերացնել դիմադրկությունը, բարելավել աշխատանքի կազմակերպումը, ճիշտ դասավորել ուժերը ձեռնարկությունում» :

Դիմադրկությունը, այդ վորևե պատասխանատվության բացակայություն և հանձնարարված աշխատանքի, մեխանիզմների, դադդյահների, գործիքների նկատմամբ : Դիմադրկության դեմ մղվող պայքարի առաջին արդյունքները :

Դիմադրկության վերացումը աշխատանքի մեջ, աշխատանքի ճիշտ կազմակերպում ստեղծելը աշխատանքի արտադրողականությունից բարձրացման և արտադրանքի վորակի

լաւացման պայմաններն են : Պայքար սոցիալիստական կարգապահութեան համար, աշխատանքի նոր, սոցիալիստական ձևերի համար :

Տեխնիկական նորմալութեամբ աշխատանքի ճիշտ կազմակերպման և ներգործարանային պլանավորման հիմքն է : Վարպետի և բրիգադավարի ղեկավար դերի ապահովումը ձեռնարկութեամբ :

Ընկ. Ստալինի չորրորդ պայմանը. «Աշխատել, վորպես-պի ԽՍՀՄ բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական տեխնիկական ինտելիգենցիան» :

Սոցիալիստական տնտեսութեան հսկայական աճումը, նոր արդյունաբերական շրջանների ստեղծումը և ճարտարապետ-տեխնիկական ուժերի անհրաժեշտ պահանջը :

Ուրալում, Սիբիրում, Միջին Ասիայում ճարտարապետ-տեխնիկական կադրերի պատրաստման ոճախները միամբողջ սխեմայով ստեղծելու անհրաժեշտութեամբ : Պայքար նոր մասնագետների վորակի համար :

Բանվոր դասակարգից արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա պատրաստելու ուղիները : Բարձրագույն և միջնակարգ տեխնիկական կրթութեան ցանցի ընդարձակումը : Տեխնիկական ԲՏՈՒՀ-երի և ԲՈՒՀ-երի ցանցի աճումը : Հարմարաւորումների առաջնությունը ղեկավար աշխատանքի :

Ընկ. Ստալինի հինգերորդ պայմանը. «Փոխել վերաբերմունքը հին չկրթյալ ճարտարապետ-տեխնիկական ուժերի նկատմամբ, ավելի մեծ ուշադրութեամբ և հոգածութեամբ ցուցաբերել նրանց հաղեպ, ավելի համարձակ նրանց աշխատանքի ներգրավել» : Հին արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի զգալի մասի շրջադարձը խորհրդային իշխանութեան կողմը : Այդ շրջադարձի պատճառները : Համկ (բ) Կ ծրագիրը հին տեխնիկական կադրերի ուղղորդման խնդիրների մասին : Այս հարցում կուսակցութեան քաղաքականութեան խեղաթուրումների դեմ վճռարար պայքարելու խնդիրը (ԿԿ-ի վորոշումը Արդյունաբերական ախպարի խորհրդի մասին) :

Ընկ. Ստալինի վեցերորդ պայմանը. «Արմատացնել և

ամրացնել տնտեսաշխարհը, ավելացնել ներարդյունաբերական կուտակումը» :

Կուտակման հին արդյունների (թեթև արդյունաբերութեան, գյուղատնտեսութեան, բյուրեղային կուտակումների) անբավարար լինելը արդյունաբերութեան և տրանսպորտի վերակառուցման համար : Կուտակման հին արդյունների ուժեղացման և ծավալման հետ միասին անհրաժեշտ է կուտակումներ կատարել ծանր արդյունաբերութեան և ամենից առաջ մեքենայնութեան ներսում : Անտեսակալութեան դեմ պայքարելու, միանձնյա ղեկավարութեան ուժեղացնելու և տնտեսաշխարհը ամրացնելու խնդիրները :

Տնտեսաշխարհը վորպես տնտեսական ղեկավարութեան հիմնական մեթոդ, ձեռնարկութեան և ցեխերի տնտեսական փոխհարաբերութեան հիմնական ձև : Տնտեսաշխարհը և պլանը :

Անհրաժեշտ է պայքարել կուսակցութեան հստակ գծի համար տնտեսաշխարհի հարցերում, մեկ կողմից՝ ընդդէմ տնտեսաշխարհի սկզբունքի բուրժուական խեղաթուրման, մյուս կողմից՝ ընդդէմ նրա «ձախ» անտեսման :

Տնտեսաշխարհը և աշխատանքի սոցիալիստական ձևերի զարգացումը :

Տնտեսաշխարհային բրիգադը սոցմրցման և հարմարաւորութեան նոր, բարձրագույն ձևն է : Հերթափոխային-հանդիպական պլանը :

«Նոր ձևով աշխատել, նոր ձևով ղեկավարել» : Նոր ձևով աշխատելու հիմնական սկզբունքն է՝ «ընդհանուր» ղեկավարութեան անցնել կոնկրետ ղեկավարութեան, վորը հիմնված է գործի մեջ թափանցելու վրա :

